

Արձանագրություն N 1-12/16

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորատի 2016 թ.-ի
դեկտեմբերի 8-ի նիստի

Ներկա էին՝ Թոքմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ., դասախոս), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Թոքմաջյան Վ.Հ. (տ.գ.դ., դոցենտ), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ., դոցենտ), Առաքելյան Ա.Ա., Զաքարյան Գ.Է. (ուսխորհրդի նախագահ), Մուսայելյան Վ.Ս., Շահբազյան Ա.Վ., Հակոբյան Ռ.Ս.:

Հրավիրված էին ճարտարապետաշինարարության ֆակուլտետի դեկան՝ Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ.դոկտոր-պրոֆեսոր.), տեղեկատվական տեխնոլոգիաների և բնագիտական առարկաների ամբիոնի ասիստենտ՝ Առաքելյան Գ.Գ.

ՕՐԱԿԱՐԳ

1. Երևան քաղաքում փորձուսուցում անցած Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ճարտարապետաշինարարության ֆակուլտետի «ճարտարապետություն» մասնագիտության առաջին կուրսի ուսանողների հաշվետվությունը (ղեկավար՝ Համբարձումյան Սերգեյ Ալեքսանդրի)
- 2.«Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռազմական ամբիոնի գործունեության» կարգի նախագծի մասին
3. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հետբուհական մասնագիտական երրորդ աստիճանի ուսուցման գործընթացի կազմակերպման մասին
- 4.Այլ հարցեր

Լսեցին 1- Երևան քաղաքում փորձուսուցում անցած Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ճարտարապետաշինարարության ֆակուլտետի «ճարտարապետություն» մասնագիտության առաջին կուրսի ուսանողների հաշվետվությունը (ղեկավար՝ Համբարձումյան Սերգեյ Ալեքսանդրի):

Որոշեցին 1-Ընդունել ի գիտություն Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ճարտարապետաշինարարության ֆակուլտետի «ճարտարապետություն» մասնագիտության առաջին կուրսի ուսանողների Երևան քաղաքում կազմակերպված փորձուսուցման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 2-Ռեկտորատի քննարկմանը ներկայացվեց «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռազմական ամբիոնի գործունեության» կարգի նախագիծը (գեկուցող՝ Հ.Թոքմաջյան):

Որոշեցին 2- Հավանություն տալ «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռազմական ամբիոնի գործունեության» կարգին և այն ներկայացնել հոգաբարձուների խորհրդի հաստատմանը:

Լսեցին 3- Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հետբուհական մասնագիտական երրորդ աստիճանի ուսուցման գործընթացի կազմակերպման մասին ներկայացրեց ուսումնամեթոդական բաժնի պետ՝ Թ.Գրիգորյանը:

Որոշեցին 3- Ընդունել ի գիտություն Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հետբուհական մասնագիտական երրորդ աստիճանի ուսուցման գործընթացի կազմակերպման մասին ուսումնամեթոդական բաժնի պետ՝ Թ.Գրիգորյանի տեղեկատվությունը:

Լսեցին 4- Երևան քաղաքում ՇՏՀ տեխնոլոգիական ֆակուլտետի «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտության առաջին կուրսի ուսանողներին փորձուսուցում անցնելու մասին իրազեկեց ռեկտոր՝ Հ. Թոքմաջյանը: Առաջարկվեց ղեկավար նշանակել «Տեղեկատվական տեխնոլոգիաների և բնագիտական առարկաների» ամբիոնի ասիստենտ՝ Գայանե Գուրգենի Առաքելյանին:

Որոշեցին 4- Ընդունել ի գիտություն Երևան քաղաքում Շուշիի տեխնոլոգիական համալսարանի տեխնոլոգիական ֆակուլտետի «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտության առաջին կուրսի ուսանողների փորձուսուցում անցնելու մասին ռեկտոր՝ Հ. Թոքմաջյանի տեղեկատվությունը: Փորձուսուցման ղեկավար նշանակել «Տեղեկատվական տեխնոլոգիաների և բնագիտական առարկաների» ամբիոնի ասիստենտ՝ Գայանե Գուրգենի Առաքելյանին:

Նախագահ՝ ստորագրություն **Հ.Վ.Թոքմաջյան**
Քարտուղար՝ ստորագրություն **Ա.Ա.Առաքելյան**